Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51-1

ք. Երևան ____/_____/2022թ.

« ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն »-ը ի դեմս Լիլիթ Միրզախանյան ի, որը գործում է « ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի »-ը, ի դեմս տնօրեն Անդրանիկ Քեշիշյան ի, որը գործում է « Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2448000.00 AMD(երկու միլիոն չորս հարյուր քառասունութ հազար դրամ) ՀՀ դրամ :629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային

օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

—

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո*

ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր

համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել

քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

—

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	**Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի**
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109-8	**Նորք 11փ. 15տ.**
ՖՆ գործառնական վարչություն	**Ամերիաբանկ**
900011001352	**1570051624310200**
00153247	**23226775**
Digitally signed by MIRZAKHANYAN LILIT 6107860169 Date: 2022.03.17 17:19:44 AMT **/ստորագրություն/**	**----------** Digitally signed by KESHISHYAN ANDRANIK 2009900804 Date: 2022.03.15 11:24:31 AMT **/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են։*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից։ Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով։ Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից։*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի*

հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
1	35811170/1	Հատուկ հանդերձանք և պարագաներ / Համազգեստի լրակազմ INSARAG	Մարինե Թովմասյան Ա/Ձ, Մարինե Թովմասյան Ա/Ձ, Մարինե Թովմասյան Ա/Ձ	1. Համազգեստի լրակազմ INSARAG - Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից, կեպիից և անթև բաճկոնից (ժիլետից): Գործվածքի մակերեսային խտությունը 240□5 գրամ/մ2, բաղադրությունը՝ 65□3% պոլիէսթեր, 35%□3% բամբակ, ընդ որում գործվածքի ներքին շերտում բամբակի բարձր պարունակությամբ: Գործվածքի տեսակը՝ , ներկման մեթոդը՝ , գույնը՝ մուգ կապույտ: Բաճկոնը միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի երիզաշղթայով (տեսակը՝ տրակտոր) և կպչուն ժապավեններով:

				Շղթան և կպչուն ժապավենները մշակված են կենտրոնական ուղղահայաց կարին զուգահեռ՝ լանջափեշերի ստորն եզրակարից մինչև լուսանդրադարձիչ ժապավենների միացման կարը: Ընդ որում ձախ լանջափեշին մշակվում են ներսի կողմից, իսկ աջ լանջափեշին արտաքին կողմից՝ եզրակարից 1սմ հեռավորությամբ: Լուսանդրադարձիչ ժապավենների վերնամասում՝ կենտրոնական ուղղահայաց կարից 8-9սմ հեռավորությամբ կարվում են 13Х2սմ չափսի սև գույնի կպչուն ժապավեններ՝ ձախ կողմում մեկ, աջ կողմում երկու հատ: Ձախ կողմում տեղադրվում է համազգեստ կրողի անվան առաջին տառը և ազգանունը՝ 13Х2սմ չափսով սև գույնի կտորի վրա սպիտակ թավշյա թելով լատինատառ ասեղնագործված, դարձերեսը մշակված սև կպչուն ժապավենով: Աջ կողմում տեղադրվում են և տարբերանշանները՝ 13Х2սմ չափսով սև գույնի կտորի վրա սպիտակ թավշյա թելով լատինատառ ասեղնագործված, դարձերեսը մշակված սև կպչուն ժապավեններով: Բաճկոնն ունի 5+/-0,5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք, որի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի աջ և ձախ կողմերի կենտրոնական հատվածներում՝ ծալված վիճակում ներսի կողմերից, մշակված են մեկական սև կպչուն ժապավեններ՝ օձիքի եզրակարից 1-2սմ հեռավորության վրա, համապատասխան թեքությամբ: Օձիքի ձախ կողմի անկյունային եզրակարից 1սմ խորությամբ և օձիքին համապատասխան թեքությամբ մշակված է 6,5սմ երկարությամբ և 2սմ լայնությամբ ախլակ՝ երկկողմանի կարված 4Х2սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Կրծքամասում՝ կենտրոնական ուղղահայաց կարից 6,5սմ հեռավորության վրա, ուղղահայաց կտրվածքով մշակված են 2 ներկարված գրպաններ՝ 26+/-1սմ երկարությամբ և 17+/-1սմ լայնությամբ, կոճկվում են սև

				շղթաներով, որոնց վրա մշակված են 8-ից 10մմ լայնությամբ շղթան փակող կափույրներ: Կրծքամասի ձախ կողմում՝ ներկարված գրպանի եզրակարից 2սմ հեռավորությամբ, մշակված է վրադիր ծավալուն գրպան՝ 14սմ երկարությամբ և 11սմ լայնությամբ, կափույրով: Վրադիր գրպանի վերևի կենտրոնական հատվածում՝ եզրակարից հետո կարվում է 3Х2սմ չափով սև կպչուն ժապավեն՝ կափույրին ամրանալու համար: Կափույրը՝ 5+/-0,5սմ երկարությամբ և 9+/-0,5սմ լայնությամբ, մշակվում է գրպանից 1սմ բարձրության վրա՝ գրպանի ձախ եզրակարի ուղղությամբ, կենտրոնում 3Х2սմ չափով կարվում է սև կպչուն ժապավեն՝ գրպանին ամրանալու համար: Առաջնամասի կողային հատվածներում՝ կենտրոնական ուղղահայաց եզրակարից 11սմ և ստորին հորիզոնական եզրակարից 2սմ հեռավորության վրա կարվում են վրադիր ծավալուն գրպաններ՝ 17+/-0,5սմ երկարությամբ և 16+/-0,5սմ լայնությամբ, կափույրներով: Գրպանների վերին անկյուններում կարվում են 2Х2սմ չափի սև կպչուն ժապավեններ՝ կափույրին ամրանալու համար: Կափույրերը՝ 6+/-0,5սմ երկարությամբ և 16+/-0,5սմ լայնությամբ, մշակվում են գրպաններից 1,5-2սմ բարձրությամբ, ստորին անկյունային հատվածներում ունեն 2Х2սմ չափի սև կպչուն ժապավեններ՝ գրպանին ամրանալու համար: Թևքերի ներքևի մասում մշակված են ուղղանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են սև կպչուն ժապավեններով: Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործվում է ՓԾ թևքի տարբերանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև, ՀՀ եռագույնը՝ ներքևում «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը: Թևքերի տակ՝ կողային կարից 1-1,5 սմ հեռավորությամբ, աջ և ձախ կողմերում մշակված են 2սմ-անոց բացվածքներ՝ օդափոխության համար:

				Բացվածքների կողեզրերը մշակված են խիտ զարդակարով: Բաճկոնի ամբողջ երկայնքով՝ մինչև թևքերի միացման կարը, օձիքի միացման կարից 10-11սմ հեռավորությամբ, անցնում է 3սմ լայնությամբ լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեն, իսկ ժապավենից 2,5սմ ներքև՝ կենտրոնական հատվածում, սպիտակ ներկով, 4Χ3,5սմ չափսով տպագրված է : Բաճկոնի կողային հատվածներում մշակված են 3,5սմ լայնությամբ և 7սմ երկարությամբ ներկարված 2 ախլակներ՝ իրանի չափսերի կարգավորման համար, կոճկվում են 1 օղակով և 2 կոճակներով: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի կենտրոնական եզրաշերտի վրա՝ վերևից 15սմ ներքև, մշակված է 6Χ4,5սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեն կոչման տարբերանշանի ամրացման համար: Անթև բաճկոն (ժիլետ) – միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի երիզաշղթայով (տեսակը՝ տրակտոր): Շղթան մշակվում է առաջնամասով (կրծքավանդակով) անցնող զարդակարից 1.5-2սմ վերև և ավարտվում ստորև եզրից 2.5սմ վերև: Բաճկոնի աջ կողմի կենտրոնում՝ առաջնամասով (կրծքավանդակով) անցնող զարդակարից 1սմ վերև մշակվում է 9սմ երկարությամբ և 8սմ լայնությամբ վրադիր ծավալուն գրպան, 5սմ երկարությամբ կափույրով, որը գրպանին է ամրանում 3Χ1.5սմ չափսի սև կպչուն ժապավենով: Զարդակարի տակից՝ շղթային զուգահեռ անցնող կենտրոնական ուղղահայց կարից 6սմ հեռավորությամբ մշակվում է 14սմ երկարությամբ և 11+/-0,5սմ լայնությամբ վրադիր ծավալուն գրպան, 5սմ երկարությամբ կափույրով, որը գրպանին է ամրանում 3Χ1.5սմ չափսի սև կպչուն ժապավենով: Բաճկոնի ձախ կողմի կենտրոնում՝ առաջնամասով (կրծքավանդակով) անցնող զարդակարի տակից՝ շղթային

				զուգահեռ անցնող կենտրոնական ուղղահայց կարից 7սմ հեռավորությամբ մշակվում է 14սմ երկարությամբ և 11սմ լայնությամբ վրադիր ծավալուն գրպան, 5սմ երկարությամբ և 9սմ լայնությամբ կափույրով: Կափույրի լայնությունը փոքր է գրպանի լայնությունից և տեղադրվում է գրպանի ձախ եզրակարի և առաջնամասով (կրծքավանդակով) անցնող զարդակարի հատման կետից, գրպանին ամրանում է 3Х1.5սմ չափսի սև կպչուն ժապավենով: Բաճկոնի առաջնամասով՝ երկկողմանի շղթայից մինչև թիկունքային մասին միացող կողային կարերը, անցնում է 3սմ լայնությամբ լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեն՝ աջ և ձախ կողմերի վրադիր գրպանների տակից 0.5սմ հեռավորությամբ: Բաճկոնի կողային հատվածներում՝ լուսանդրադարձիչ ժապավենի տակից, շղթային զուգահեռ անցնող կենտրոնական ուղղահայց կարից 5սմ հեռավորությամբ մշակվում են մեկական 16սմ երկարությամբ և 18սմ լայնությամբ վրադիր, ծավալուն փակ գրպաններ: Գրպանների վերին կարից 1.5սմ և կողային կարերից հավասարաչափ հեռավորությամբ մշակված է 14սմ լայնությամբ բացվածք՝ մշակված սև շղթայով, գրպանը կոճկելու համար: Շղթան երկկողմանի փակվում է 1սմ բարձրությամբ կափույրներով: Կողային ձախ գրպանի վրա՝ կենտրոնական հատվածում մշակվում է 11սմ երկարությամբ և 15սմ լայնությամբ վրադիր ծավալուն գրպան, 5սմ երկարությամբ կափույրով, որը գրպանին է ամրանում երկու 2Х2սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Կողային աջ գրպանի վրա՝ կենտրոնական հատվածում կողք կողքի մշակվում են 2 վրադիր ծավալուն գրպաններ՝ 10սմ երկարությամբ և 8սմ լայնությամբ, 5սմ երկարությամբ կափույրներով, որոնք գրպաններին են ամրանում մեկական 2.5Х2սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Բաճկոնի մեջքի ամբողջ երկայնքով՝ օձիքից 12սմ

				հեռավորությամբ, անցնում է 3սմ լայնությամբ լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեն, իսկ ժապավենից 2սմ ներքև՝ կենտրոնական հատվածում, սպիտակ ներկով, 4Х3,5սմ չափսով տպագրված է : Մեջքին՝ ստորին եզրակարից 2սմ և կողային կարերից հավասարաչափ հեռավորությամբ մշակված է 40+/-1սմ լայնությամբ և 25+/-1սմ երկարությամբ՝ վրադիր ծավալուն փակ գրպան՝ սեղանաձև: Գրպանի վերին կարը 28+/-1սմ լայնությամբ, կողային գրպաններով, որոնք փակվում են մեկական ներկարված 3Х1.5սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Բաճկոնի կողային հատվածներում, ներսի կողմից մշակվում են մեկական 14Х14սմ չափսի վրադիր գրպաններ՝ որոնք կոճկվում են շղթայով: Բաճկոնի կենտրոնական եզրաշերտի կրծքավանդակի հատվածում մշակված է 6Х4,5սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեն կոչման տարբերանշանի ամրացման համար: Տաբատը ուղիղ ձևվածքով, մշակված գոտիով, առաջամասում՝ կողային թեք ներկարված գրպաններով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է սև շղթայով և մեկ կոճակով: Գոտին մշակվում է 5 կամրջակով և գոտու չափը կարգավորող 3սմ լայնությամբ և 8սմ երկարությամբ ներկարված 2 ախլակներով՝ իրանի չափսերի կարգավորման համար, կոճկվում են 1 օղակով և 2 կոճակներով: Տաբատի կողային թեք ներկարված գրպաններից 6-6,5սմ ներքև մշակված են վրադիր ծավալուն գրպաններ՝ 20+/-1սմ երկարությամբ և 16+/1սմ լայնությամբ, կափույրներով: Կափույրները՝ 6+/-0,5սմ երկարությամբ և 16+/-0,5սմ լայնությամբ, ամրանում են 2Х2սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Տաբատի առաջնամասով՝ վրադիր գրպաններից 2,5սմ ներքև անցնում է զարդակար՝ մի կողային կարից մյուսը: Փողկերի ամբողջ երկայնքով՝ ծնկամասից 8-9սմ ներքև մշակված են մեկական 4սմ լայնությամբ,

				լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեններ: Տաբատի ետևամասի աջ կողմում ներկարված է գրպան՝ 14սմ լայնությամբ և 14սմ խորությամբ, կափույրով, որն ամրանում է 2Х2սմ չափսի սև կպչուն ժապավեններով: Նստատեղն ամբողջությամբ մշակված է կրկնակի գործվածքով: Համազգեստի միացման կարերն իրականացվում են շղթայական փակ զույգ կարերով՝ 1 սանտիմետրում առնվազն՝ 4 կար: Համազգեստի կոճակները 18մմ տրամագծով, 4 կարանցքերով, եզրերն ուռուցիկ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ մուգ կապույտ: Կեպին կազմված է կոշտ հովհարից, դիմային հատվածից և չորս եռանկյունաձև կտրվածքով հատվածներից, որոնք միանալով իրար կազմում են մեկ ամբողջություն: Միացման կարերը ներսի կողմից մշակված են 1սմ լայնությամբ սև տիսմայով: Դիմային մասի և չորս հատվածների միացման կետում՝ գագաթում, ամրացված է 15մմ տրամագծով, ուռուցիկ, մուգ կապույտ գույնի, պլաստմասե կոճգամ: Եռանկյունաձև կտրվածքով 4 հատվածների վրա՝ գագաթից 65+/-5մմ հեռավորությամբ մշակված են մեկական անցքեր՝ օդափոխության համար: Օդափոխության անցքերը մշակված են եզրակարով: Կեպիի ծոծրակամասի ստորին հատվածում մշակված են չափսը կարգավորող երկու պլաստմասե լեզվակներ՝ 65+/-2մմ երկարությամբ և 20+/-2մմ լայնությամբ: Լեզվակներն իրար են միանում համապատասխան չափի 7 կլոր կոճգամներով և 7 կլոր ակոսներվ: Հովհարը միանում է դիմային հատվածին կտորի կողեզրերով: Դիմային հատվածն աստառապատ է, աստառը՝ սպիտակ, ցանցանման գործվածքից: Հովհարին միջադրված է 4+/-1մմ հաստության պլաստմասե ճկվող միջադիր: Հովհարի երկայնքով՝ եզրից 15մմ խորությամբ մշակվում են 4 զարդակարեր՝ իրարից 5մմ հեռավորությամբ: Դիմային հատվածի

				կենտրոնում՝ հովհարին միացման կարից 4սմ բարձրության վրա, լատինատառ 20Х15+/-2մմ չափսով և սպիտակ մետաքսյա թելով ասեղնագործված է : Կեպիի ստորին հատվածով՝ ներսի կողմից, մշակված է 3սմ լայնության սև գույնի ծալովի աստառ՝ որի վրայով անցնում են 2 զարդակարեր՝ իրարից 1սմ հեռավորությամբ: Կեպիի բոլոր միացման կարերն արվում են մուգ կապույտ թելով: Կոչման տարբերանշանն արտադրվում է սև անփայլ գործվածքից՝ հնգանկյան տեսքով, դարձերեսին մշակված սև գույնի ինքնակպչուն ժապավենով: Արտաքին չափսերը՝ 72 Х 52մմ +/- 2%: Վրան ոսկեգույն թելով ասեղնագործված աստղերով՝ Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ հնգաթև աստղեր Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա - 13մմ հնգաթև աստղեր: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև 3 աստղերի կենտրոնը 42մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորության վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև

				աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: Ենթասպա – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով, ըստ տեսականու: Արկղերը պիտակավորված, պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Տարբերանշանների քանակներն ըստ կոչումների՝ Գնդապետ՝ 10 հատ, Փոխգնդապետ՝ 11 հատ, Մայոր՝ 7 հատ, Կապիտան՝ 12 հատ, Ավագ լեյտենանտ՝ 7 հատ, Լեյտենանտ՝ 4 հատ, Ավագ ենթասպա՝ 20 հատ, Ենթասպա՝ 49 հատ:

				Փաթեթավորումը հակերով՝ մեկ հակի մեջ 10լրակազմ, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 լրակազմ: Հակերը պիտակավորված, պիտակի վրա նշված տեսականու անվանումը, քանակը, չափսը, արտադրողի անվանումը: Համազգեստի չափս-հասակային սանդղակ Չափս 42/3 44/3 46/3 46/4 46/5 48/2 48/3 48/4 48/5 50/3 50/4 50/5 52/2 52/3 52/4 54/3 54/4 56/4 56/5 60/3 60/5 Քանակ 2 4 14 4 3 3 11 2 1 10 12 2 1 12 12 2 12 5 2 1 5 Կցված է e530df64.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Հասցե՝ Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109-8

ՖՆ գործառնական վարչություն

900011001352

00153247

Լիլիթ Միրզախանյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MIRZAKHANYAN LILIT 6107860169
Date: 2022.03.17 17:19:13 AMT

ՎԱՃԱՌՈՂ

Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի

Հասցե՝ Նորք 11փ. 15տ.

Ամերիաբանկ

1570051624310200

23226775

Անդրանիկ Քեշիշյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by KESHISHYAN ANDRANIK 2009900804
Date: 2022.03.15 11:25:15 AMT

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	լրակազմ	20400.00	2448000.00	120	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	120	մինչև 2022թ. ապրիլի 1

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցե՝ Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109-8
ՖՆ գործառնական վարչություն

ՎԱՃԱՌՈՂ
Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի
Հասցե՝ Նորք 11փ. 15տ.
Ամերիաբանկ

900011001352

00153247

Լիլիթ Միրզախանյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MIRZAKHANYAN LILIT
6107860169
Date: 2022.03.17 17:20:12 AMT

1570051624310200

23226775

Անդրանիկ Քեշիշյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by KESHISHYAN ANDRANIK
2009900804
Date: 2022.03.15 11:25:44 AMT

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	35811170/1	Հատուկ հանդերձանք և պարագաներ / Համազգեստի լրակազմ INSARAG			1224000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00	2448000.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ

նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցե՝ Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109-8
ՖՆ գործառնական վարչություն
900011001352
00153247
Լիլիթ Միրզախանյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MIRZAKHANYAN LILIT 6107860169
Date: 2022.03.17 17:20:32 AMT

ՎԱՃԱՌՈՂ
Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի
Հասցե՝ Նորք 11փ. 15տ.
Ամերիաբանկ
1570051624310200
23226775
Անդրանիկ Քեշիշյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by KESHISHYAN ANDRANIK 2009900804
Date: 2022.03.15 11:26:16 AMT

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Հատուկ հանդերձանք							

	և պարագաներ / Համազգեստի լրակազմ INSARAG							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն -ի (այսուհետ՝ Գնորդ) և Անդրանիկ Քեշիշյան Գրիգորի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/51-1 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Հատուկ հանդերձանք և պարագաներ / Համազգեստի լրակազմ INSARAG	լրակազմ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն